

**ԱՇԽԱՏԱՎԵՏՅԱՆ**

Իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ,  
Հայաստանի Հանրապետության պետական  
կառավարման ակադեմիայի դոկտորանտ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ  
ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱՎԱԿԱԿԱՆ  
ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ՝ ԱՆՑՅԱԼ-ՆԵՐԿԱ-ԱՊԱԳԱ  
ԵՌԱՎԱՄԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՔՈՒՄՈՒՄ**

Հոդվածում լրաբանվում է Հայաստանի Հանրապետությունում միգրացիոն գործընթացների սահմանադրավական կարգավորման հայեցակարգային դրույթները՝ անցյալ-ներկա-ապագա եռամբանության համատեքստում: Մասնավորապես, հոդվածում հեղինակն անդրադառնում է Հայաստանի Հանրապետությունում արտագաղթի և ներգաղթի իրավական կարգավորման սահմանադրավակական դրույթներին և դրանց անմիջական ու ոչ անմիջական ազդեցության հիմնահարցերին կապված միգրացիոն քաղաքականության մշակման և իրականացման հետ: Հոդվածում հեղինակի կողմից համապատասխան առաջարկություններ են ներկայացվում Հայաստանի Հանրապետության միգրացիոն ոլորտի սահմանադրավական կարգավորման կատարելագործման ուղղությամբ:

**Հիմնարարեր-միգրացիա, անկախության հոչակագիր, միգրացիայի սահմանադրավական կարգավորում, միգրացիոն քաղաքականություն, մարդկային կապիտալ, միգրացիոն իրավակարգ:**

Բնակչության միգրացիան իր բոլոր դրսնորումներով՝ էմիգրացիա (արտագաղթ), իմիգրացիա (ներգաղթ), ներքին և արտաքին միգրացիա և այլն, պատմականորեն ձևավորված համամարդկային երևույթ է, որը պատմական տարրեր ժամանակաշրջաններում պայմանավորված է եղել բազմաթիվ արտաքին և ներքին գործոններով<sup>1</sup>:

20-րդ դարի հայտնի պատմական իրադարձությունները՝ ուրբանիզացիան, կլիմայական փոփոխությունները, երկու համաշխարհային պատերազմները, հայերի, Պոնտոսի հոյների, ասորիների, հրեաների, կամբոջացիների, ռուսնդացիների և այլ ազգերի ու ժողովրդների նկատմամբ իրագործված ցեղասպանությունները՝ իրենց անդառնալի հետևանքներով, ինչպես նաև գիտատեխնիկական անախաղեակ առաջընթացը, որը հանգեցրեց մարդկանց, տեղեկատվության և ապրանքների արագ տեղաշարժին, որի արդյունքում համաշխարհային միգրացիայի գործընթացներն արագացան:

Անհրաժեշտ է կարևորել, որ Հայաստանի Հանրապետությունը բացառություն չի և անմասն չի կարող մնալ համաշխարհային միգրացիայի նոր հնարավոր գործընթացներից: Ուստի, կարևորելով Հայաստանի անկախության մասին հոչակագրի նախաբանում միգրացիայի սահմանադրավական հիմքերին անուղղակիորեն առնչվող դրույթների առկայությունը, այն է՝ «Հայկական ԽՄՀ Գերազույն խորհուրդը, ... եղելով մարդու իրավունքների համբարձանուր հոչակագրի սկզբունքներից և միջազգային իրավունքի համբանամաշ նորմերից, ...

յսնդիր դճելով ժողովրդավարական, իրավական հասարակարգի ստեղծումը...», անհրաժեշտ է արձանագրել, որ՝

ա) Հայաստանի անկախ պետականության հիմքում դրվագ են Մարդու իրավունքների համընդհանուր հոչակագրի սկզբունքները, իսկ այդ նույն հոչակագրի 13-րդ և 14-րդ հոդվածներում ամրագրված է անձի ազատ տեղաշարժվելու և բնակավայր ընտրելու, ինչպես նաև քաղաքական ապաստան ստանալու իրավունքները,

բ) Հայաստանի անկախ պետականության ստեղծմամբ ժողովրդավարական, իրավական հասարակարգ ստեղծելու խնդիր է դրվել, իսկ հասարակագրը հասարակության կյանքի կազմակերպումն է պայմանավորված արտադրության որոշակի մակարդակով, արտադրանքի փոխանակմամբ և բաշխմամբ, հասարակական գիտակցության և կյանքի տարրեր ոլորտներում մարդկային փոխագործակցության ավանդույթների բնորոշ առանձնահատկություններով, և այդ ամենը պաշտպանվում է պետության ու իրավունքի կողմից: Այսինքն, իրավական հասարակարգ ունենալու նպատակն արդեն իսկ ենթադրում է, որ հասարակության կյանքի կազմակերպումը պետք է խարսխված լինի բացառապես իրավունքի վրա, որտեղ մարդը՝ իր իրավունքներով և ազատություններով, որպես հասարակության բարձրագույն արժեք, հարգվում ու պաշտպանվում է հանրային իշխանության կողմից:

Անշուշտ, իրավունքի տեսությունից հայտնի է, որ անկախության հոչակագրերը, որպես այդպի-

## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

սին, նորմատիվ իրավական ակտեր չեն. դրանցում իրավունքի նորմեր չկան, համընդանուր և համապարտադիր վարքագծի կանոնը բացակայում է, բացառություն չէ նաև Հայաստանի անկախության մասին հոչակագիրը: Սակայն, պետք է նշել, որ անկախության հոչակագրերը, որպես կանոն, որոշակի պատճական ժամանակահատվածում հանդիսանում են ժողովրդի քաղաքական-իրավական արժեհամակարգի ու աշխարհայացքի արտացոլումը և հետագա իրավական դաշտի ստեղծման կողմնորոշիչը:

Հայաստանի անկախության հոչակագիրը և հետագայում դրա հիման վրա ընդունված Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը միզրացիայի իրավակարգի ձևավորման հիմքն են, իսկ այդ իրավակարգն ընկալվում է որպես միզրացիայի պետական քաղաքականության ուղղությունների իրավական միջոցներով իրացնելու օրենսդրության ամրագրված համակարգ, որն ուղղված է մարդու և քաղաքացու միզրացիայի իրավունքների իրացմանը :

1995 թվականի հուլիսի 5-ին Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 22-րդ հոդվածով հոչակվեց, որ «յուրաքանչյուր քաղաքացի ունի Հանրապետության տարածքում ազատ տեղաշարժվելու և ընակավայր ընտրելու իրավունք...»: Հիշատակված նորմի բովանդակությունից բխում է, որ ներպետական մակարդակով ազատ տեղաշարժվելու իրավունքը պատկանում է միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին, իսկ օտարերկրյա քաղաքացիները կամ քաղաքացիություն չունեցող անձինք նման իրավունքներ չունեն:

Բայց, միևնույն ժամանակ, Սահմանադրության 6-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերում ամրագրվեց, որ «...Վավերացված միջազգային պայմանագրերը Հանրապետության իրավական համակարգի քաղաքությունը մասն են: Եթե նրանցում սահմանված են այլ նորմեր, քան նախատեսված են օրենքներով, ապա կիրառվում են պայմանագրի նորմերը...», ինչը ենթադրում է, որ այդ թվում միզրացիայի իրավական կարգավորման ոլորտում վավերացված միջազգային պայմանագրերը ևս Հայաստանի Հանրապետության իրավական համակարգի մի մասն են կազմում, դեռ ավելին՝ դրանք գերակա են ներպետական օրենսդրության նկատմամբ:

Այսպես, օրինակ՝ ՄԱԿ-ի «Փախստականների կարգավիճակի մասին» Կոնվենցիան Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է նտել 1993 թվականի հոկտեմբերի 4-ին, որով փախստականի կարգավիճակ ստացած անձանց ազատ տեղաշարժվելու հետ կապված ավելի լայն իրավունքներ է տրված, քան Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, այսինքն՝ նման դեպքե-

րում փախստականի կարգավիճակ ստացած անձինք՝ իրավունքի ուժով գրեթե հավասարեցված են Հայաստանի Հանրապետության քաղաքացիների իրավական կարգավիճակին:

Թերևս, այդ հանգամանքը ևս բխում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 4-րդ հոդվածի բովանդակությունից, ըստ որի՝ «Պետությունն ապահովում է մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանությունը Սահմանադրության և օրենքների հիման վրա՝ միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին համապատասխան»՝ իհարկե, հաշվի առնելով նաև Սահմանադրության 43-րդ հոդվածից բխող պահանջները, որ «Սահմանադրությամբ ամրագրված իրավունքները և ազատությունները սպառիչ չեն և չեն կարող մեկնարաններ որպես մարդու և քաղաքացու այլ հանրաճանաչ իրավունքների և ազատությունների քացառում»:

Նման մոտենում է ցուցաբերել նաև Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը իր՝ 2011 թվականի հունիսի 03-ի N ՍԴ-966 որոշման մեջ արտահայտած իրավական դիրքորոշմամբ, այն է՝ «ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի՝ 4-րդ մասի համաձայն՝ միջազգային պայմանագրերը Հայաստանի Հանրապետության իրավական համակարգի քաղաքությունից մասն են: Եթե վավերացված միջազգային պայմանագրում սահմանվում են այլ նորմեր, քան նախատեսված են օրենքներով, ապա կիրառվում են պայմանագրի նորմերը...», ինչը ենթադրում է, որ այդ թվում միզրացիայի իրավական կարգավորման ոլորտում վավերացված միջազգային պայմանագրերը ևս Հայաստանի Հանրապետության իրավական համակարգի մասն են կազմում, դեռ ավելին՝ դրանք գերակա են ներպետական օրենսդրության նկատմամբ:

Սահմանադրավական այդ նորմի բովանդակությունից հետևում է, որ ՀՀ միջազգային պայմանագրերը նորմատիվ իրավական ակտեր են, որոնք ՀՀ իրավական համակարգի քաղաքությունից մասն են, այսինքն՝ բովանդակում են իրավակարգավորման համապատասխան բնագավառի սորտմենտների համար վարրագծի պարտադիր կանոններ, ոճնեն ՀՀ օրենքներից և իրավական այլ ակտերից առավել բարձր իրավաբանական ուժ, ենթակա են պարտադիր կատարման ՀՀ պետական և տեղական ինքնակառավարման բոլոր մարմնների ու պաշտոնատար անձանց կողմից ՀՀ ողջ տարածում»:

Որպես այդպիսին՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 2-րդ գլուխը՝ մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներն ու ազատությունները, հումանիստական մոտեցմամբ է շարադրված, քանի որ դրանցում մեծ մասամբ օգտագործվում են «յուրաքանչյուր ոք», «յուրաքանչյուր անձ» կամ «մարդ» եզրույթները, ինչը վկայում է այն մասին, որ Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն չունեցող անձինք՝ իրենց իրավական կարգավիճակով, գրեթե չեն տարբերվում Հայաստանի քաղաքացիներից՝ քացառությամբ որոշ դեպքերի: Օրինակ՝ կյանքի, անձի անձեռնմխելության, անձնական կյանքի գաղտնիության,

հանգստի և այլ իրավունքներն ու ազատությունները անվեհապահորեն տրված են ինչպես Հայատանի քաղաքացիներին, այնպես էլ Հայատանի Հանրապետության քաղաքացիություն չունեցող անձանց:

Բայց մինչև 2005 թվականին կատարված փոփոխությունները Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեջ առկա էին որոշ իրավական բացեր, օրինակ՝ 29-րդ հոդվածում ամրագրված էր, որ աշխատանքի ազատ ընտրության և գործադրության իրավունքի կարող են օգտվել միայն Հայաստանի քաղաքացիները, որը մեր կարծիքով հակասում է միջազգային իրավունքի սկզբունքներին, օրինակ՝ փախստականների իրավական կարգավիճակը կարգավորող մի շարք միջազգային իրավական ակտերով նախատեսված է փախստականների աշխատանքի ազատ ընտրության իրավունքը ունդունող պետություններում:

Իսկ 2005 թվականի սահմանադրական հետազա կարգավորումների արդյունքում միջրացիայի սահմանադրախրավական իհմքերը բարելավեցին, մասնավորապես՝

ա) ՀՀ Սահմանադրության (2005 թվականի փոփոխությունները) 3-րդ հոդվածում ամրագրվեց, որ մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքները և ազատությունները բարձրագույն արժեքներ են, իսկ պետությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք:

Այս առումով արդարացի է պրոֆեսոր Վ.Նիկոլայանը, որը նարդու և նրա արժանապատվության, հիմնական իրավունքների ու ազատությունների՝ որպես բարձրագույն արժեքների մասին իրավական գաղափարը դիտարկեց սահմանադրական անվտանգության երաշխավորման և սահմանադրական կարգի ծևավորման համար անհրաժեշտ ու յուրահատուկ մարդասիրական հիմք .

թ)ՀՀ Սահմանադրության (2005 թվականի փոփոխությունները) 25-րդ հոդվածը սահմանեց, որ ազատ տեղաշարժվելու իրավունքը պատկանում է Հայաստանի Հանրապետության տարածքում օրինական իիմբերով գտնվող յուրաքանչյուր անձի, այլ ոչ թե միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին:

Ի դեպ, հարկ է նկատել, որ եթե նույնիսկ ներգաղքային ապօրինի կերպով է գտնվում Հայաստանի Հանրապետությունում՝ չունենալով այնտեղ ազատ տեղաշարժվելու իրավունք, դա դեռ չի նշանակում, որ այդ ներգաղքայալը զրկված է բոլոր հիմնական իրավունքներից ու ազատություններից: Այդ առումով, հատկանիշական է այն, որ այսօր օտարերկրա քաղաքացիների և որևէ երկրի քաղաքացիություն չունեցող անձանց՝ Հայաստանի Հանրապետություն օրինական ճանապարհով մուտք

գործելով իրավական հիմքերը կարգավորվում են «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքով, «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքով, «Քաղաքական ապաստանի մասին» ՀՀ օրենքով և միջազգային մի շարք այլ պայմանագրերով.

գ) Աշխատանքի ընտրության ազատությունը պատկանում է յուրաքանչյուր անձի, այլ ոչ թե միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին (ՀՀ Սահմանադրության (2005 թվականի փոփոխությունները) 32-րդ հոդված): Միևնույն ժամանակ անհրաժեշտ է նշել, որ «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Օտարերկրացիները (ներառյալ որևէ երկրի քաղաքացիություն չունեցող անձինք (քացարությունը հեղինակի)) իրավունք ունեն ազատորեն տնօրինելու իրենց աշխատանքային ունակությունները, ընտրելու մասնագիտության և գործունեության տեսակը, զբաղվելու Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված տնտեսական գործունեությամբ՝ պահպանելով Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված սահմանափակումները...», իսկ այդ նույն օրենքի 23-րդ հոդվածում թվարկված են օտարերկրացիների աշխատանքային թույլտվություն ստանալու բացառությունները, օրինակ՝ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի հիման վրա ժամանող մասնագիտունները կամ այլ անձինք, օտարերկրյա կապիտալի մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների հիմնադիրները (ներառյալ տնօրինները կամ լիազորված ներկայացուցիչները), Հայաստանի Հանրապետության համապատասխան միջազգային պայմանագրերի ուժով աշխատանքի թույլտվություն ստանալու պահանջից ազատված օտարերկրացիները և այլն.

դ)ՀՀ Սահմանադրության (2005 թվականի փոփոխությունները) 33.2-րդ հոդվածում ամրագրվեց, որ «Յուրաքանչյուր որ իրավունք ունի ապրելու իր առողջությանը և բարեկեցությանը նպաստող շրջակա միջավայրում...», ինչը բնապահպանական միգրացիայի սահմանադրափական հիմքն է հանդիսանում.

## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

**Աելով դրա իրավական կարգավորման առարկան, զ) բացահայտելով իրավական կարգավորման սուրյեկտը, որպես մարմինների համակցություն, որոնք պատասխանատու են միզրացիոն գործքարացների պահանափորման (ծրագրման) և կարգավորման համար։**

2015 թվականի փոփոխություններով Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ վերանայվեցին պետության՝ միզրացիայի քաղաքանության իրականացման սահմանադրափական հիմքերը, մասնավորապես՝

ա) ՀՀ Սահմանադրության (2015 թվականի փոփոխությունները) 3-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրվեց, որ մարդու անօստարելի արժանապատվությունն իր իրավունքների և ազատությունների անքակտելի հիմքն է։ Այսինքն՝ անձի արժանապատվությունը, սահմանադրական իրավունքի տեսանկյունից, պետական վերաբերնունքի այն չափանիշն է, որն ուղղված է անձին իր իրավական կարգավիճակով, որպես բարձրագույն սոցիալական արժեք ընկալելու փաստով։ Սահմանադրագետների զգալի հատվածի կողմից ընդունված կարծիք կա, որ անձի հիմնական իրավունքների պահպանումն ու պաշտպանությունը կապված է հինգ պայմանների պահպանումից՝<sup>1)</sup> 1) անձի արժանապատիվ կյանքի (կեցության) ապահովում, 2) մարդկանց միջև իրավահավասարության ապահովում, 3) մարդու քաղաքական և հասարակական ինքնարտահայտման ապահովում, 4) հնարավոր պետական բարձրիռողությունից անձի ընթացակարգային (պրոցեսուալ) իրավունքի երաշխավորում և 4) մարդու անձնական ֆիզիկական անձեռնմխելիության ապահովում<sup>8)</sup>։ Այսպիսով, պետության կողմից վերոնշյալ հինգ պայմանների պահպանումը հանդիսանում է անձի արժանապատվության երաշխիքը, որ միզրացիոն քաղաքականության մշակման և իրագործման համար ոչ թե ներազբան օրյեկտ է, այլ ակտիվ գործող սուրյեկտ։

բ) Նույն Սահմանադրության 11-րդ հոդվածով սահմանվեց, որ Հայաստանի Հանրապետության տնտեսական կարգի հիմքը սոցիալական շուկայական տնտեսությունն է։ Այս սկզբունքն ընկալվում է որպես սոցիալական-տնտեսական քաղաքականության մոդել, որը կոչված է մրցումնակ տնտեսության հետք հիման վրա միացնել ազատ նախաձեռնողականությունը սոցիալական առաջնարացի հետ, ինչն էլ ապահովվում է տնտեսական ցուցանիշներով<sup>9)</sup>։ Անշուշտ, տնտեսական նման մոդելը ենում է այն պահանջմունքից, որ ոչ պետությունը, ոչ մասնավոր տնտեսավարող սուբյեկտները իրավունք չունեն լիարժեք վերահսկելու տնտեսությունը, քանի որ նրանք կոչված են ծառայելու մարդ-

կանց (պետության բնակչությանը), և այս տնտեսական մոդելի հիմնական բնութագիրըներից մեկն էլ այն է, որ այն կոչված է ապահովելու պետության բնակչության լիարժեք և իրական գրադադարությունը (ներառյալ անձի՝ ազատ ծեռնարկատիրական գործունեությամբ գրադադարությանը): Այսպիսով, Հայաստանի տնտեսական նոր կարգի ձևավորման համար էական նշանակություն ունի մրցունակ մարդկային կապիտալը, այն է՝ գիտելիքների, հմտությունների և կարողությունների համակցությունը, որն օգտագործվում է մարդու և ամբողջ հասարակության բազմազան պահանջմունքների բավարարմանը։

**Մարդկային կապիտալը, լայն իմաստով, տնտեսության, հասարակության և ընտանիքի գարգացման արտադրողականության իմտենսիվ գործունք է, որն իր մեջ ներառում է աշխատանքային ռեսուրսների կրթված մասը, գիտելիքները, մտավոր և կառավարչական աշխատանքի գործիքազմը, ընակության միջավայրը և այն աշխատանքային գործունեությունը, որը ապահովում է մարդկային կապիտալի՝ որպես զարգացման արտադրական գործոնի արդյունավետ և ուղիղնալու գործունեությունը։**

Այսպիսով անհրաժեշտ է նկատել, որ Հայաստանի տնտեսական նոր կարգը միզրացիայի քաղաքանության մշակման ու իրագործման հիմքն է հանդիսանում, որի արդյունքում ներգաղթի և արտագաղթի իրավական կարգավորումը պետք է բխի Հայաստանի տնտեսական նոր կարգով պայմանավորված մարդկային կապիտալի ձևավորման և պահպանման շահերից, այն է՝ պետության աշխատումի ինքնարավություն, աշխատումի կրթական մակարդակի բավարարում, ներգաղթյալ-աշխատողների մշակութային և կրթական հարմարեցում տեղական շուկայի պահանջներին և այլն։

զ) ՀՀ Սահմանադրության (2015 թվականի փոփոխությունները) 54-րդ և 56-րդ հոդվածներում նշված է քաղաքական ապահովանի իրավունքը և ազգային ու էթնիկական ինքնության պաշտպանության իրավունքը, որը ներգաղթյալների համար նաև կենսական նշանակություն ունեցող իրավունք է, և վերջինս նույնիսկ չի կարող սահմանափակվել ուղղական կամ արտակարգ դրության ժամանակ (Սահմանադրության 76-րդ հոդված)։

Վերոգրյալ մարդու իրավունքների և ազատությունների տեսանկյունից դրական տեղաշարժ է, թեև արդարության համար պետք է նշենք, որ ներկայում Հայաստանի Հանրապետությունում միջազգային պայմանագրերի և օրենսդրական մակարդակով պաշտպանվում է անձանց քաղաքական ապահովանի և ազգային ու էթնիկական ինքնության պաշտպանության իրավունքները։ Սակայն պետք է նշել, որ ՀՀ Սահմանադրությամբ (2015 թվականի փոփոխությունները) հստակորեն

չեն կարգավորվում ներգաղթյալ աշխատողների և նրանց ընտանիքի անդամների կրթական և մշակութային իրավունքներն ու պարտականությունները, օրինակ՝ ներգաղթյալ-աշխատողների երեխաների կրթությունը պետք է կազմակերպվի հայո՞ց լեզվով, թե՞ նրանց մայրենի, կամ ներգաղթյալների համար հայերեն սովորելը իրավու՞նք է, թե՞ պարտականություն, կամ ներգաղթյալ-աշխատողները իրավունք ունե՞ն Հայաստանի Հանրապետությունում իրենց կրոնական ուղղածության դպրոցները իմանել՝ որպես իրենց ազգային և էթնիկական ինքնության իրավունքի իրացում։ Վերոնշյալ մեր հարցադրությունը շատ կարևոր են Հայաստանի Հանրապետության հետագա միջրացիոն քաղաքականության մշակման և իրականացման համար, քանի որ սահմանադրական օրենսդրությունը սահմանում է այն սկզբունքները, զաղափարները, ձևերը, իրականացման մեթոդներն ու ուղղությունները, որոնք անհրաժեշտ են քաղաքական գործունեության և դրա սուբյեկտների կենսագործունեության համար<sup>12</sup>։

դ) ՀՀ Սահմանադրությամբ (2015 թվականի փոփոխությունները) մարդու և քաղաքացու իմանական իրավունքներն ու ազատությունները կրկին մարդաբարական մոտեցմանք է շարադրված, քանի որ դրանց գերակշիռ մասում օգտագործվում են «յուրաքանչյուր որ», «յուրաքանչյուր անձ» կամ «մարդ» եզրույթները, ինչը փաստում է, որ Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն չունեցող անձինք իրենց իրավական կարգավիճակով գրեթե չեն տարբերվում Հայաստանի քաղաքացիներից՝ քացառությամբ որոշ դեպքերի։

ե) Ի դեպ, կարևոր մի հանգամանք ևս. ՀՀ Սահմանադրության (2015 թվականի փոփոխությունները) 77-81-րդ հոդվածներում ամրագրված են իմանական իրավունքների և ազատությունների չարչահման արգելքը, համաշափության և դրոշակիության սկզբունքները, դրանց էության անխախտելիությունը, ինչպես նաև դրանց մեկնարանության և սահմանափակման սահմանները։ Հատկապես ուշադրության է արժանի Սահմանադրության 81-րդ հոդվածի 1-ին մասը, որտեղ ամրագրված է, որ իմանական իրավունքների և ազատությունների վերաբերյալ Սահմանադրությունում ամրագրված դրույթները մեկնարանելիս հաշվի է առնվում Հայաստանի Հանրապետության վավերացրած՝ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների պրակտիկան։

Վերոնշյալ դրույթը էական ազեցություն է ունենալու հետագայում Հայաստանի Հանրապետության միջրացիայի քաղաքականության մշակման և իրագործման համար, քանի որ, Հայաստանի Հանրապետության կողմից վավերացրած մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների

նագրերի հիման վրա գործող մարմինների պրակտիկան Հայաստանի միջրացիոն քաղաքականության վրա կարող է ինչպես դրական, այնպես էլ բացասական ազդեցություն ունենալ, ինչը նույնիսկ կարող է սպառնալիք հանդիսանալ Հայաստանի ազգային անվտանգության համար։ Օրինակ՝ բավական է նշել Եվրոպական Միության մեջ միջրացիոն քաղաքականությունը մինչև 2015 թվականի Եվրոպական միջրացիայի ճգնաժամը, կամ «Փերինչերն ընդդեմ Ըվեյցարիայի» գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից կարծիքն ազատ արտահայտելու իրավունքի մեկնարանումը և այլ նմանատիպ պրակտիկ օրինակներ։

Վերոգրյալից ելնելով՝ պետք է փաստել, որ ՀՀ Սահմանադրության (2015 թվականի փոփոխությունները) պարագայում Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի կողմից միջազգային պայմանագրերը նախնական սահմանադրական վերահսկողության ենթարկելը էլ ավելի պատասխանատու և ոչ դյուրին գործընթաց է դառնում, քանի որ այդ միջազգային պայմանագրերը վավերացվելուց հետո դրանց հիման վրա գործող մարմինների թե՛ դրական, թե՛ բացասական պրակտիկան ուղղի ազդեցություն է ունենալու Հայաստանի սահմանադրաբարվական հարաբերությունների վրա։

Վերոշարադրյալից ելնելով՝ անհրաժեշտ է նշել, որ ՀՀ Սահմանադրությունը (2015 թվականի փոփոխությունները) միջրացիայի ոլորտի սահմանադրաբարվական կարգավորման մասով ունի դրական առաջընթաց, սակայն անհրաժեշտ է նաև հաշվի առնել վերոնշյալ հիմնախնդիրների առկայությունը և դրանց լուծման համար միջոցներ ձեռնարկել։

Ներկայում միջրացիայի ոլորտի հետ կապված կարևորագույն մի շարք հարաբերություններ՝ լավ թե վատ, կարգավորվում են նաև տարբեր օրենքներով և միջազգային պայմանագրերով, օրինակ՝

ա) «Քաղաքացիության մասին» ՀՀ օրենքով կարգավորվում է Հայաստանի Հանրապետությունում օրինական հիմքերով գտնվող (բնակող) օտարերկրյա քաղաքացիների և որևէ երկրի քաղաքացիություն չունեցող անձանց (ներառյալ փախստականի կարգավիճակ ունեցող անձինք) Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու իրավական հիմքերն ու չափորոշիչները, ինչպես նաև ներգաղթի և օրենքով նախատեսված այլ դեպքերում Հայաստանի Հանրապետության քաղաքացիության խմբային ձեռքբերման իրավական սահմանները։

բ) «Օտարերկրյացիների մասին» ՀՀ օրենքով կարգավորվում են օտարերկրա քաղաքացիների և որևէ երկրի քաղաքացիություն չունեցող անձանց

## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետություն մուտք գործելու, Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվելու և բնակվելու, Հայաստանի Հանրապետության տարածքով տարանցիկ երթևեկելու, Հայաստանի Հանրապետությունից ելքի, ինչպես նաև օտարերկրացիների հետ կապված այլ հարաբերությունները՝ միևնույն ժամանակ ամրագրելով, որ վերոնշյալ անձինք ունեն Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին հավասար իրավունքներ, ազատություններ և պարտականություններ, եթե Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, օրենքներով և միջազգային պայմանագրերով այլ բան նախատեսված չէ.

գ) «Քաղաքական ապաստանի մասին» ՀՀ օրենքով կարգավորվում է Հայաստանի Հանրապետությունում քաղաքական ապաստանի իրավունք ստանալու հիմքերը, կարգը, այդպիսի իրավունք ստանալու դիմումը մերժելու, տրված իրավունքը դադարեցնելու պայմանները, ինչպես նաև դրանց հետ առնչվող այլ հարաբերությունները.

դ) «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքը կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում փախստականի ճանաչման, ապաստանի տրամադրման հետ կապված հարաբերությունները, ինչպես նաև ապահովում է Փախստականների կարգավիճակի մասին 1951 թվականի կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա), դրա 1967 թվականի Արձանագրության կիրառումը և ճանաչում է բոլոր օտարերկրացիների և քաղաքացիություն չունեցող անձանց՝ Հայաստանի Հանրապետության տարածքում և Հայաստանի Հանրապետության պետական սահմանի անցման կետերում ապաստան հայցելու, ինչպես նաև ապաստան ստանալու իրավունքը, եթե նրանք բավարարում են ապաստանի տրամադրման համար սույն օրենքով սահմանված անհրաժեշտ պահանջները:

Գաղտնիք չէ, որ Հայաստանի Հանրապետությունը, տարբեր պատճառներով պայմանավորված, վերջին տասնինգ տարվա ընթացքում մարդկային ռեսուրս արտահանող (արտագաղթ) երկիր է դարձել<sup>13</sup>, որը հատկապես Հայաստանի համար ազգային անվտանգության խնդիր է, քանի որ այն սակավ մարդկային ռեսուրս ունեցող երկիր է հանդիսանում: Վերոնշյալ սահմանադրավակական բարեփոխումները դրական են, սակայն ոչ լիարժեք, ուստի այդ բարեփոխումների անհրաժեշտությունն ու կարևորությունը ուղղի համեմատական են Հայաստանի Հանրապետության միգրացիոն քաղաքականության հետ, քանի որ միգրացիոն քաղաքականությունը հիմքն է սահմանադրավական կարգի սկզբունքների հիման վրա, միգրացիոն ոլորտի հասարակական հարաբերությունների օբյեկտիվորեն հիմնավորված համակարգային նպատակների, խնդիրների, ուղղությունների, միգրացիոն օրենսդրության նորմերի, որոնք իրականացվում

են (իրացվում են) միգրացիոն գործընթացի սուբյեկտների կողմից (ֆիզիկական անձինք, հասարակական կազմակերպություններ, պետական մարմիններ) և ուղղված են պետության տարածքում ֆիզիկական անձանց տեղաշարժին, բնակեցմանը, տեղաբնակեցմանը, հարմարմանը և ինտեգրմանը՝ ապահովված խթանող և կարգավորող գործոններով<sup>14</sup>:

Ամփոփելով վերոշարադրյալ՝ պետք է նշենք, որ 2015 թվականին Հայաստանի Հանրապետությունում իրականացված սահմանադրավական կարգավորումները մեկ քայլ առաջ են միգրացիայի սահմանադրավակական կարգավորման առումով: Բայց միևնույն ժամանակ պետք է փաստել, որ միգրացիայի սահմանադրավակական կարգավորումների տեսանկյունից դեռ շատ անելիքներ կան, սակայն մինչև դրանց անրադառնալը կցանկանայինք օրինակներ քերել այլ երկրների միգրացիոն դաշտի սահմանադրավակական կարգավորման փորձից, օրինակ՝

ա) Բրազիլիայի Դաշնային Հանրապետության Սահմանադրության 162-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված է, որ Անդրադրյալներին մուտքի բոլոր վայրերում պահանջվում է ազգային պարագաների անձնագիրը և անձնագիրը պահպանությամբ սահմանված պարտականությունները, և որ Պետությունը պաշտպանում է իր սահմաններից դուրս աշխատավոր իտալացիներին:

բ) Իտալիայի Հանրապետության Սահմանադրության 35-րդ հոդվածի 4-րդ մասում ամրագրված է, որ Պետությունը ճանաչում է Լիմիգրացիայի ազատությունը, պայմանով, որ, ըստիանոր շահերից ելնելով, պետք է պահպանվեն օրենսդրությամբ սահմանված պարտականությունները, և որ Պետությունը պաշտպանում է իր սահմաններից դուրս աշխատավոր իտալացիներին:

գ) Չինաստանի Ժողովրդական Հանրապետության Սահմանադրության<sup>15</sup> 32-րդ հոդվածում ամրագրված է, որ Չինաստանի Ժողովրդական Հանրապետությունը պաշտպանում է օտարերկրացիների օրինական շահերն ու իրավունքները, ովքեր գտնվում են Չինաստանում օտարերկրացիները պարտավոր են պահպանել (հետևել) Չինաստանի Ժողովրդական Հանրապետության օրենքները: Չինաստանի Ժողովրդական Հանրապետությունը կարող է այն օտարերկրացիներին պահանջություն ուղարկել հիմնավորված համակարգային նպատակների, խնդիրների, ուղղությունների, միգրացիոն օրենսդրության նորմերի, որոնք իրականացվում

դ) Պորտուգալիայի Հանրապետության Սահմանադրության<sup>16</sup> 59-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ (e) կետում ամրագրված է, որ Պետությունը պարտավոր է ապահովել աշխատանքի պայմանները, պարզեատրումն ու հանգիստը, որոնց համար աշխատողները իրավունք ունեն, այն է՝ պահպանել աշխատանքի պայմանները և ապահովել աշխատող ներգաղթյալների սոցիալական արտոնությունը:

**թյունները.** Իսկ Սահմանադրության 74-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ (i) և 10-րդ (j) կետերում ամրագրված է, որ կրթության ոլորտում քաղաքականություն իրականացնելիս պետությունը պարտավոր է (9-րդ (i) կետ) ներգաղթյալների երեխաններին ապահովել պորտուգալերեն լեզուն ուսանելու հնարավորությամբ, ինչպես նաև նրանց հնարավորություն ընձեռել որպեսզի վերջիններս առնչվեն պորտուգալական մշակույթի հետ (10-րդ (j) կետ). Կրթության իրավունքի իրացման հարցում ներգաղթյալների երեխաններին պատշաճ աջակցություն ցուցաբերել:

Հայաստանի Հանրապետության միզրացիայի իրավակարգի և քաղաքականության արդյունավետության բարձրացման ու կատարելազործման նպատակով գտնում ենք, որ փոփոխված սահմանադրությունը էլ ավելի կշահեր և ամբողջական կլիներ Հայաստանի միզրացիայի ոլորտի սահմանադրաբանական կարգավորման տեսանկյունից, եթե դրանում ներառվեին ներքոհիշյալ դրույթները (սահմանադրական կարգի հիմունքներում և մարդու իրավունքներն ու հիմնական ազատությունները գլխում).

ա) Հայաստանի Հանրապետությունը, ենթով իր ազգային անվտանգության, հասարակական, մշակութային, տնտեսական և գիտակրթական շահերից, մշակում և իրականացնում է այնպիսի պետական ժողովրդագրական քաղաքականություն, որը կապահովի պետության մարդկային ռեսուրսների (ներառյալ կապիտալի) ինքնարավության մակարդակը: Պետությունը միջոցներ է ձեռնարկում կանխելու բնակչության վերաբարողականության գործընթացում սեռերի արհեստական նվազումը կամ ավելացումը.

բ) Օտարեկյա քաղաքացիները և որևէ երկրի քաղաքացիություն չունեցող անձինք Հայաստանի

Հանրապետություն կարող են մուտք գործել, բնակել, աշխատել և զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ միայն օրենսդրությամբ սահմանված կարգով և պայմաններով:

գ) Ներգաղթյալների իրավունքներն ու պարտականությունները սահմանվում և կարգավորվում են Սահմանադրությամբ, օրենսդրությամբ և միջազգային պայմանագրերով: Հայաստանի Հանրապետությունում ներգաղթյալների (բացառությամբ փախստականների և քաղաքական ապատան հայցողների) մուտքի թույլտվություն ստանալու հետ կապված օրենսդրությունը պետք է համապատասխանի ազգային անվտանգության և հասարակական ու տնտեսական շահերին:

դ) Հայաստանի Հանրապետությունում օրինական հիմքերով գտնվող անձինք իրենց կարգավիճակով հավասարեցված են Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին՝ բացառությամբ Սահմանադրությամբ, օրենսդրությամբ և միջազգային պայմանագրերով սահմանված դեպքերի:

ե) Հայաստանի Հանրապետությունում օրինական հիմքերով գտնվող անձինք օրենքով սահմանված դեպքերում և կարգով իրավունք ունեն պետության հաշվին սպիրել հայոց լեզու և հայոց պատմություն, ուսումնասիրել հայ մշակույթը: Հայաստանի Հանրապետությունում օրինական հիմքերով գտնվող անձինք իրավունք ունեն պահպանելու իրենց էքսիլ առանձնահատկությունները, լեզուն ու կրոնը, եթե դա չի հակասում Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգությանը (ներառյալ պաշտպանության), հասարակության բարյական բարքերին և հասարակական շահերին:

<sup>1</sup> «Միզրացիա» եզրույթը առաջացել է լատիներեն «migratio», «migro» բառերից, որն ունի վերաբնակեցում և անցնելի իմաստային նշանակությունը ([https://hy.wikipedia.org/wiki/Բնակչության\\_միզրացիա](https://hy.wikipedia.org/wiki/Բնակչության_միզրացիա)):

<sup>2</sup> “Большой юридический словарь” под ред. А.Я Сухарева, Изд.-“Инфра-М”: Москва-2009г., С. 470.

<sup>3</sup> Василенко В.А.: “Миграционный правовой порядок: институциональный подход” : жур. “Философия права”. 2007. N 2. С. 106-108.

<sup>4</sup> ՀՀ Սահմանադրություն՝ 2005 թվականի նոյեմբերի 27-ին կատարված փոփոխություններով:

<sup>5</sup> Никитяева В.В. “Конституционная безопасность как условие эффективной реализации основ конституционного строя” /Вестник воронежского института МВД России-2007 (4)/ <http://elibrary.ru/item.asp?id=11780618>

<sup>6</sup> Брик А.Д. “Ограничения в миграционном праве в контексте теоретико-правовой интерпретации его сущности” /ЮРИСТЪ – ПРАВОВЕДЬ 2008(6)/ <http://elibrary.ru/item.asp?id=15115179>.

<sup>7</sup> <http://www.jurterms.ru/161-135410/>

<sup>8</sup> Цыреторов С. В. “Право на достоинство личности в конституционном праве Германии и России” (Вестник бурятского государственного университета` 2011-2) ст. 248-249, снос. 6, <http://elibrary.ru/item.asp?id=16316803&>

<sup>9</sup> Տես նոյն տեղում:

<sup>10</sup> Мордовченков Н.В., Паленова Т.В., Поляков В.М. “Людвиг Эрхард и социальная рыночная экономика в Германии: Инфраструктурный аспект” (Азимут научных исследований: экономика и управление. 2015. № 3 (12), С. 67) /<http://elibrary.ru/item.asp?id=24600908>/

<sup>11</sup> Корчагин Ю. А. Широкое понятие человеческого капитала.- Воронеж: ЦИРЭ /<http://www.lerc.ru/?part=articles&art=3&page=22>.

<sup>12</sup> Карповец Ф.В.: “Конституционно-правовые принципы миграционной политики как основа деятельности Федеральной миграционной службы”, журн. “Современное право” 2008г.-2(1), С. 2, снос. 2, (<http://elibrary.ru/item.asp?id=11790077>).

<sup>13</sup> ՀՀ սահմանադրության ծավալների լազ տարիների ([http://www.smsmta.am/?menu\\_id=18](http://www.smsmta.am/?menu_id=18)):

<sup>14</sup> Коробеев В.А. “Миграционная политика: понятие и сущность”. ([http://www.rusnauka.com/ONG\\_2006/Pravo/16936.doc.htm](http://www.rusnauka.com/ONG_2006/Pravo/16936.doc.htm)).

<sup>15</sup> Քրազիլիայի Սահմանադրություն (ռուսերեն լեզվով) [http://www.concourt.am/armenian/legal\\_resources/world\\_constitutions/constit/brazil/brazil-r.htm](http://www.concourt.am/armenian/legal_resources/world_constitutions/constit/brazil/brazil-r.htm):

<sup>16</sup> Իտալիայի Սահմանադրություն (ռուսերեն լեզվով) [http://www.concourt.am/armenian/legal\\_resources/world\\_constitutions/constit/italy/italy-r.htm](http://www.concourt.am/armenian/legal_resources/world_constitutions/constit/italy/italy-r.htm):

<sup>17</sup> Չինաստանի Սահմանադրություն (ռուսերեն լեզվով) [http://www.concourt.am/armenian/legal\\_resources/world\\_constitutions/constit/china/china-r.htm](http://www.concourt.am/armenian/legal_resources/world_constitutions/constit/china/china-r.htm):

<sup>18</sup> Πορτուգալիայի Սահմանադրություն (ռուսերեն լեզվով) [http://www.concourt.am/armenian/legal\\_resources/world\\_constitutions/constit/portugal/portug-r.htm](http://www.concourt.am/armenian/legal_resources/world_constitutions/constit/portugal/portug-r.htm):

Առօտ Այրապետյան

Կանդидատ յուրիդիկական գիտությունների, դոցենտ

Դոկտորանտ ակադեմիայի պետական վարչության կողմէ

## РЕЗЮМЕ

### *Конституционно-правовое регулирование миграции в Республике Армения в контексте троицы прошлое-настоящее-будущее*

В статье освещены концептуальные положения конституционно-правового регулирования миграционных процессов в Республике Армения: в контексте троицы прошлое-настоящее-будущее. В частности, автор статьи ссылается на правовое регулирование конституционно-правового положения эмиграции и иммиграции в Республике Армения, и их прямых и косвенных воздействий на вопросы, связанные с разработкой и реализацией миграционной политики. В статье автором представлены соответствующие предложения, для урегулирования конституционно-правового совершенствования в области миграции Республики Армения.

**Ключевые слова:** *миграция, декларация независимости, конституционно-правовое регулирование миграции, миграционная политика, человеческий капитал, миграционный режим.*

Ashot Hayrapetyan

PhD in law, Associate professor

Doctoral in the Public Administration

Academy of the Republic of Armenia

## SUMMARY

### *Constitutional regulation of the migration in the Republic of Armenia in the scope of the trinity of past-present-future*

In this article the conceptual provision of the constitutional regulation of the migration in the Republic of Armenia in the scope of the trinity of past-present-future is presented. Particularly, the author addresses the provisions of the constitutional regulation of the emigration and immigration in the Republic of Armenia and issues concerning their direct and indirect influences connected with the drafting and realization of the migration policy. In the article author makes suggestions towards the improvement of the constitutional regulation in the field of migration of the Republic of Armenia.

**Keywords:** *migration, declaration of the independence, constitutional regulation of the migration, migration policy, human capital, migration regime.*